ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«08» նոյեմբերի 2024թ. N 2694-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻՈՒՂԻՆԵՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈԽԱԴՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1010-Ն որոշման հավելվածի 16-րդ կետով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը և «Հայկական Ավիուղիներ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը․

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայկական Ավիուղիներ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Փոխադրող) նշանակել Երևան-Թբիլիս-Երևան ուղղությամբ կանոնավոր օդային հաղորդակցություններ իրականացնող փոխադրող։
2. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետին՝ ապահովել հրամանի օրինակի տրամադրումը Փոխադրողին և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում։
3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով

ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

11/8/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Երևան